



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբեր, 2022 թվականի № 77 -Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ», «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՈՒՄԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵՐՅՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունների 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը անկախ աուդիտի ենթարկելու անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի №60-Լ որոշմամբ նախաձեռնված գնման ընթացակարգը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա չկայացած է հայտարարվել, Հանրային հեռարձակողի խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու վերաբերյալ մրցույթ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:
3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության անկախ աուդիտ անցկացնելու

վերաբերյալ մրցույթ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

28 դեկտեմբեր, 2022 թվականի

ք. Երևան